ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«20» փետրվարի 2017 թվականի N: 10 ք.Գյումրի

ՏԻԳՐԱՆ ՂԱՐԻԲՅԱՆԻ, ԳՐԻԳՈՐ ՊԱՊՈՅԱՆԻ ԵՎ ՄԵՍՐՈՊ ԲԶՆՈՒՆՈՒ ԳՈՐԾՈՒՂՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2017 թվականի փետրվարի 15-ի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված հրաձգության հանրապետական մրցույթին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքոհիշյալ աշխատակիցներին 2017 թվականի փետրվարի 23-ին գործուղել ք.Երևան.

Տիգրան Ղարիբյան	-	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ,
Գրիգոր Պապոյան	-	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ,
Մեսրոպ Բզնունի	-	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է